թեան վտանգ է սպառնում Շեխ Ալի խանի կողմից, քանի որ նորա կամքի հակառակ ինքը խան է ընտրուած, և որովհետեւ այնքան այժ չունէր, որ անհաւասար կռուի մէջ խառնուէր՝ ուստի օգնութեան դիմեց Շիրվանի Մուստաֆա խանին, որ վրէժխընդրութեան ոգով լարուած էր իւր երկու եղբօր արեան համար, որոնք շատ ժամանակ չէր, որ սպանել էին Բագուում Ֆաթալի խանի հրամանով։

Ահա ինչու համար Մուստաֆա խանը յայտնեց իւր բոլոր պատրաստականութիւնը Հուսէին – Ղուլի խանին օգնելու։ Եւ երբ իմացաւ Շեխ Ալի խանի արշաւանքի մասին դէպի այդ նահանգը ուղարկեց Խանչօբանցիներից և Ղաբրիստանցիներից կազմուած ուժեղ հեծելազօրք։ Երկու ճակատամարտի ժամանակ, որոնք տեղի ունեցան մէկը միւսի յետեւից Մաշտաղա և Ամիրջան գիւղերի մօտ՝ Հուսէին Ղուլի խանը ջարդեց Շեխ Ալի խանին և նորա պաշտպան Միրզա Մահմէդ խանին, որոնք հազիւ հազ ազատեցին գերութիւնից և փախան Ղուբայ։ Մի առ ժամանակից յետոյ Միրզա Մահմէդ խանը կրկին Ղուբեցիների հետ յարձակուեց Բագուայ գաւառի վրայ և ամրանալով Բալախանա գիւղում տիրեց հանքերին։

Այս անգամ Հիւսէին Ղուլի խանը մի միայն բագուեցիներով առանց շիրվանցիների օգնութեան՝ գնաց իւր ախոյեանի դէմ, Բալախանում հասցրեց վերջնական հարուած և նորան իւր ընտանիքով գերի վերցրեց։ Ամուսնացաւ Միրզա Մէհմէդ խանի հարազատ քրոջ Փիրջադան խանումի հետ, իսկ իրան ընտանիքի միւս անդամների հետ ուղարկեց Ղուբայ Շեխ Ալի խանի մօտ։

1795 թուին, երբ ռուսաց զօրքերը երեւեցան Կասպեան կողմերում, Հուսէին Ղուլի խանը դիմաւորեց կոմս Զուբովին իւր հնազանդութիւնը և հպատակութիւնը յայտնելու, խնդրեց ընդունել քաղաքը և բռնել ռուս բերդապահներով։ Այդ ծառայութեան համար, կոմսի միջնորդութեամբ, Հուսէին Ղուլի խանը գեներալ — մայէորի աստիճանը ստացաւ։

Նուտով թագուհի Եկատերինայի մահից յետոյ զօրքերը, որոնք բռնել էին Բագուն և Կասպեան կողմերի քաղաքները, կրկին յետ կանչուեցան Ռուսաստան։